ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ, ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԵՎ ԿԱՊԸ. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2022 թվականի սեպտեմբերի 5 –ի № 10

Լսելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում՝

- «Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների համակարգում»,
- «Կրթական ելքային արդյունքների դասավանդման և ուսումնառության մեթոդների ու գնահատման միջև կապը: Գնահատման մեթոդների օրինակներ: Գնահատման չափանիշների դասավանդման ինտերակտիվ մեթոդների օրինակներ» ուղեցույցը,
- «Կրթական ելքային արդյունքների սահմանումը»

ուղեցույցերի հաստատման մասին հարցը: (Զեկուցող՝ Ս Ասատրյան)

Համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել համալսարանի

- «ՀՊՄՀ-ում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների համակարգում» ուղեցույցը:
- «Կրթական ելքային արդյունքների դասավանդման և ուսումնառության մեթոդների ու գնահատման միջև կապը: Գնահատման մեթոդների օրինակներ: Գնահատման չափանիշների դասավանդման ինտերակտիվ մեթոդների օրինակներ» ուղեցույցը:
- «Կրթական ելքային արդյունքների սահմանումը» ուղեցույցը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հաստատված է
«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2022թ.սեպտեմբերի 5-ի, №1 նիստում գիտական խորհրդի նախագահ՝

_____ Սրբուհի Գևորգյան

ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ և ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋև ԿԱՊԸ: ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ: ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2022

ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ, ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԵՎ ԿԱՊԸ

Մասնագիտական կրթական ծրագրերը մշակելիս անհրաժեշտ է հստակ կարողանալ համապատասխանություն գտնել դասավանդման մեթոդների, գնահատման մեթոդների և կրթական ելքային արդյունքների միջև:

Ելքային արդյունքները պետք է գրվեն այնպես, որ հնարավոր լինի ստուգել արդյո՞ք տվյալ ուսանողը ձեռք է բերել տվյալ ելքային արդյունքը, թե՝ ոչ:

Հարկ է հիշել, որ հնարավոր է, որ մեկ կամ երկու գնահատման մեթոդը բավարար չլինի գնահատելու վերջնարդյունքները:

Առարկայական նկարագրերը պետք է այնպես կառուցել, որ դասավանդման և ուսումնառության մեթոդները և գնահատման մեթոդները համագործակցեն վերջնարդյունքների հետ: Բիզգսը առաջ է քաշել կառուցողական համապատասխանություն տերմինը այս գործընթացը նկարագրելու համար: Ըստ նրա՝ լավ դասավանդման համակարգում դասավանման մեթոդը, ուսումնառության գործընթացն ու գնահատման մեթոդները բոլորը միասին համագործակցում են և աջակցում ուսանողի ուսուցմանը:

Գոյություն ունի երեք հիմնական առաջադրանքներ այդ համագործակցության ապահովման համար:

- Պարզ և հստակ ձևակերպված ԿԵԱ-ներ:
- Դասավանդման և ուսուցման մեթոդների ընտրություն, որոնք հստակ կապահովեն վերջնարդյունքների ձեռք բերումը:
- Ուսանողների ձեռք բերած վերջնարդյունքների գնահատում և ստուգում հասկանալու, թե որքան լավ են դրանք համապատասխանում ակնկալվող արդյունքին:



Գնահատումը հնարավորություն է տալիս հետազոտելու, թե ինչ են ուսանողները սովորում և որքան լավ են նրանք սովորում, հաշվի առնելով դասընթացի վերջնարդյունքները: Այսինքն, որքանով է վերջնարդյունքը յուրացվել ուսանողների կողմից: Այս գործընթացը իր մեջ ներառում է նաև հետադարձ կապի ապահովումը ուսանողների ուսումնառության վերաբերյալ և ուսումնառության նոր հնարավորությունների կամ ռազմավարության մշակում ուսանողների ուսումնառության արդյունքը բարելավելու նպատակով:

Գնահատման գործընթացում ընդգրկված են հետևյալ քայլերը.

1. Առաջնահերթ *մշակել* տվյալ դասընթացի *վերջնարդյունքները*,
2. Ուսումնառության ընթացքում պարբերաբար *հավաքել, վերլուծել և մեկնաբանել* այն ապացույցները (օրինակ, ընթացիկ ստուգումներ, բանավոր քննություն, կամ լսարանային քննարկումներ և այլ ֆորմալ և ոչ ֆորմալ *գնահատման ձևեր*), որոնք որ հնարավորություն կտան հասկանալու, թե որքանով են ուսանողների ուսումնառության արդյունքը համընկնում դասընթացի վերջնարդյունքերի հետ:
3. *Բարելավել ակադեմիական փորձը*՝ օգտագործելով ստացված արդյունքները:



Ձեր աշխատանքը առավել հեշտ դարձնելու համար ցանկալի կլինի օգտագործել հետևյալ աղյուսակը:

N	Կրթական ելքային արդյունք	Ինչպես է գնահատվելու? Ինչ մեթոդներ եք օգտագործելու, որպեսզի ստուգեք, թե ուսանողը որքանով է հմտացել այդ վերջնարդյունքը ձեռք բերելու ճանապարհին?	Երբ է վերջնարդյունքը գնահատվելու? (Ցանկալի է նշել, յուրաքանչյուր գնահատման ձևի վերաբերյալ որոշակի ժամանակահատված)	Եթե գնահատումը ցույց է տալիս, որ ուսանողը այնքան էլ չի տիրապետում վերջնարդյունքին, որոնք են ձեր քայլերը, որոնք կօգնեն, որպեսզի ուսանողը բարելավի իր գիտելիքը կամ հմտությունները:
1	Դասընթացի ավարտից հետո, ուսանողները ի վիճակի կլինեն նկարագրել պրակտիկայի զարգացման համապատասխան մակարդակները:	Քննություններ 1-3	Հոկտեմբեր, Դեկտեմբեր, Հունվար	Վերանայել քննություն-ների պատասխանները ուսանողների հետ: Բացահայտել անհաս-կանալի տերմինները Տրամադրել հետադարձ կապ, հակիրճ նկա-րագրել կատարած սխալները: Գնահատել թեստերը ուսանողների հետ միասին, ապահովելով ճիշտ պատասխան-ները: Պարզաբանել ան-հասկանալի հատ-վածները: Վերադասավանդել տվյալ թեման անհրաժ-ժեշտության դեպքում:
		Լսարանային քննարկումներ	Շաբաթական	
		Առանց գնահատականի թեստեր	Յուրաքանչյուր թեմայի վերջում	
2				
3				

Այդուհանդերձ, միշտ հիշիր, որ կրթական ելքային արդյունք գրելուց առաջ պետք է որոշես տվյալ առարկայի նպատակներն ու խնդիրները: Այնուհետև անցնես կրթական ելքային արդյունքներին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Գնահատումը մի գործընթաց է, որի միջոցով չափվում է սովորողի կրթական առաջընթացը և ձեռքբերումներն՝ ըստ սահմանված չափանիշների:

Արդյունավետ գնահատման համար անհրաժեշտ է օգտագործել գնահատման մի շարք մոտեցումներ, ինչպիսիք են ուղղակի և անուղղակի գնահատումը, որակական և քանակական գնահատում, ընթացիկ և կիսամյակային գնահատումը և այլն: Ուղղակի գնահատման ձևերն են՝ գրավոր աշխատանքները, ներկայացումները, թղթապանակները, ձևաչափին համապատասխան գնահատման համակարգը, թեզերը և այլն: Անուղղակի գնահատման ձևերն են՝ գործատուների հետ անկացված հարցումները, գործընկեր համալսարանների հետ համեմատականությունը, շրջանավարտների հետ անկացվող հարցումները, ուսումնական պլանների վերլուծությունները և այլն: Գնահատումը շատ դեպքերում նկարագրվում եմ ընթացիկ և կիսամյակային գնահատում հասկացությունների միջոցով: Ընթացիկ գնահատումը օգնում է դասախոսին և ուսանողին տեղեկանալ ուսանողի առաջադիմության վերաբերյալ: Այն հիմնականում իրականացվում է կամ ծրագրի սկզբում կամ ընթացքում: Ընթացիկ գնահատման բնորոշ գծերն են.

- Դասախոսների և ուսանողների կողմից վերջնարդյունքների և դրանց ձեռք բերման համար անհրաժեշտ չափանիշների բացահայտում
- Արդյունավետ հետադարձ կապի ապահովում

- Ուսանողների ակտիվ ներգրավվում ուսումնական գործընթացում
- Դասախոսների և ուսանողների միջև առողջ հաղորդակցում
- Ուսանողների կարիքին պատասխան դասախոսների կողմից:

Կիսամյակային գնահատումը հնարավորություն է տալիս գնահատել կամ չափել ուսանողների ընդհանրական ձեռք բերումները սովորաբար ծրագրի կամ դասընթացի ավարտին: Ցավոք սրտի, շատ հաճախ այն նույնացվում է ավանդական գնահատման ձևերի հետ, որոնք որ չեն ընդգրկում այնպիսի գնահատման ձևեր, ինչպիսիք են՝ ծրագրային աշխատանք, թղթապանակ կամ էսսե: Այդ իսկ պատճառով, կիրառելով միայն կիսամյակային գնահատում, հնարավորություն չես ունենա գնահատել բոլոր վերջնարդյունքները՝ իմանալու համար արդյոք ձեռք են բերվել, թե ոչ: Տեսականորեն, շարունակական գնահատումը կիսամյակային և ընթացիկ գնահատման ձևերի կոմբինացիան է:

Ներկայացնենք գնահատման մեթոդների և կրթական ելքային արդյունքի տեսակի համապատասխանեցման աղյուսակը /ՏԵՄՊՈՒՍ ԱՐՄԵՆՔԱ նախագիծ/:

	Կրթական ելքային արդյունքի տեսակը	**Գնահատման մեթոդները**
1	**Գիտելիք և իմացություն ցուցաբերել** (հիշել, նկարագրել, զեկուցել, պատմել/շարադրել, ճանաչել, որոշել, կապ հաստատել, փոխկապակցել)	• Գրավոր քննություն • Բանավոր քննություն • Էսսե • Զեկույց • Գրառումների ճշտության վերաբերյալ մեկնաբանություններ • Բարձրացված հարցադրումներին գրավոր պատասխան • Կարճ պատասխաններ պահանջող հարցեր • Ճիշտ/ սխալ/ բազմակի ընտրության հարցեր (թղթի վրա կամ կոմպյուտերացված գնահատում)
2	**Հաղորդակցվել** (միակողմանի և երկկողմանի հաղորդակցում, հաղորդակցում խմբի ներսում, բանավոր և գրավոր հաղորդակցում, բանավիճում/ փաստարկում, նկարագրում, պաշտպանել, հարցազրույց անցկացնել, բանակցել,	• Գրավոր ներկայացում (էսսե, զեկույց, լուսաբանող հոդված և այլն) • Բանավոր ներկայացում • Խմբային աշխատանք • Քննարկում/ բանավեճ/ դերախաղ • Ներկայացում կինոխցիկի առջև

	ներկայացնել, որոշակի գրավոր ձևաչափի օգտագործում)	
3	**Քննադատորեն մտածել և դատողություններ անել** (բերել փաստարկներ, անդրադարձ կատարել, գնահատել, արժևորել, դատել)	• Էսսե • Զեկույց • Գրախոսություն • Հոդված գրել
4	**Լուծել խնդիրներ և մշակել ծրագրեր** (բացահայտել խնդիրներ, ձևակերպել/ սահմանել խնդիրներ, վերլուծել տվյալներ, փորձաքննություն կատարել, մշակել փորձեր, պլանավորել, օգտագործել տեղեկատվություն)	• Խմբային լուծման սցենարների կազմում • Խմբային աշխատանք • Նախադեպերի վերլուծություն • Գիտական հոդվածի պատրաստում
5	**Տեղեկատվություն հայթաթել և կառավարել** (ուսումնասիրել/ հետազոտել, հետաքննել, մեկնաբանել, կազմակերպել տեղեկատվություն, փորձաքննել և ձևափոխել տեղեկատվություն, տվյալներ հավաքել, տեղեկատվության աղբյուրների փնտրում և կառավարում, դիտարկում անել)	• Հղումներով գրականության ցանկ • Նախագիծ • Ատենախոսություն • Կիրառական առաջադրանք • Կիրառական խնդիր

Ստորև ներկայացված են գնահատման մեթոդների օրինակներ ընդհանրական ցանկը, որոնց կիրառումը առավել արդյունավետ կդարձնի ուսուցման գործընթացը:

Հանձնարարական

Համապատասխան հասկացություններ: հաշվետվություն, ծրագրային հաշվետվություն, խմբային աշխատանք, ռեֆերատ, գրավոր հանձնարարական, դիսերտացիա, էսսե, սանդղակ-մոդել, նախագիծ, արձանագրություն, ծրագրային հանձնարարական:

Ուսանողի կամ ուսանողների խմբերի կողմից կատարված աշխատանքի վերջնական արդյունքի գնահատում ինչ-որ հարցի կամ հանձնարարականի կատարման ավարտից հետո: վերջնական արդյունքը կարող է հանդես գալ տարբեր ձևերի միջոցով՝ հաշվետվություններ, ռեֆերատներ, նախագծեր և այլն: Այսպիսի հանձնարարականների նպատակն է զարգացնել և փորձարկել այնպիսի կոմպետենցիաներ, ինչպիսիք են քննադատորեն և խորությամբ վերլուծել ինչ-որ դեպք կամ խնդիր, գիտելիքը կիրառել

ինտեգրված եղանակով, կամ ինքնուրույն ձևավորել նոր գիտելիք, մեթոդներ, հասկացում և/կամ գիտական գրագրության կարողություններ: Քանի որ այս կոմպետենցիաները սովորաբար բարդ են իրենց էությամբ, ապա կարևոր է սահմանել գնահատման չափանիշներ: Այդպիսի ուղեցույցը աջակցում է և ուսանողներին՝ հանձնարարականը կատարելիս և դասախոսներին՝ դրանք վերանայելիս և գնահատելիս:

Վարքագծային գնահատում աշխատանքային միջավայրում

Համապատասխան հասկացություններ: կատարողականի գնահատում, հետադարձ կապի ապահովման մեթոդ

Թեստավորում, որում ուսանողները պետք է ներկայացնեն բարդ առաջադրանքներ համեմատաբար երկար ժամանակահատվածում մասնագիտական կամ հետազոտական իրավիճակներում: Ի տարբերություն հմտությունների ստուգման թեստի, որը փորձարկում է առանձնացված հմտություններ՝ վարքագծային գնահատումը գնահատման ավելի լայն ձև է, որում հանձնարարականները ներկայացված են որպես մասնագետների ամբողջական վարվելակերպ: Վարքագծային գնահատումը օգտագործվել է հիմնելու արդյոք մասնագիտական պարտականությունների և առաջադրանքների կատարումը համապատասխանում է պահանջված կոմպետեմցիայի մակարդակին: Սա սովորաբար ենթադրում է պատրաստի գիտելիք, վերլուծական ր խնդիրների լուծման հմտություններ, մասնագիտական վերաբերմունք, քննարկման տեխնիկա և/կամ հայեցակարգերի և մեթոդաբանության իմացություն, որոնք համապատասխանում են մասնագիտական վարվելաձևին/professional behavior/: Ուսանողների կողմից ցուցաբերած հմտությունների գնահատման համար՝ օգտագործվում են գնահատման սանդղակներ և/կամ դիտարկումների ցուցակներ կամ ստուգիչ ցանկեր: Այս ցուցակներում օգտագործվող չափանիշները ներառում են դիտարկելի վարքագծային բաղադրիչներ: ուսանողներին գնահատող մարդիկ կարող են լինել աշխատավայրի աշխատակիցներ, վերապատրաստումների վերահսկիչներ, կամ համալսարանի ուսանողական խորհուրդ:

Այս կարգի գնահատումը հաճախ աշխատավայրի ընդհանուր գնահատման մի մասն է կազմում:

Մագիստրոսական ատենախոսություն

Տես դասավանդման մեթոդներ բաժնում:

Բաց գիրք քննություն /open book examination/

Տարբերակումներ: Պրոբլեմի վրա հիմնված ուսուցման հանձնարարականներ/.

Գրավոր քննություն, որում ուսանողները կարող են օգտվել տեղեկատվական աղբյուրներից հարցերին պատասխանելու, հանձնարարականները կատարելու համար: Այդպիսի աղբյուրների օրինակներ կարող են հանդիսանալ դասագիրքը, հոդվածները, իրենց իսկ նշումները, ՊՊՏ ներկայացումները, բանաձևերի աղյուսակները, համացանցը, քարտեզները և այլն: Այն քննությունները, որոնցում կիրառվում են այնպիսի աղբյուրներ ինչպիսիք են բառարաններ, հաշվիչներ կամ նկարելու նյութեր համարվում են սովորական մշտական գրավոր քննություններ բաց և փակ հարցերով՝ բաց գիրք քննությունների փոխարեն: Վերջիններիս համար ուսանողները չպետք է վերաշարադրեն օգտված նյութերը: Նպատակը կայանում է տեսնելու թե որքանով են ուսանողները ընդունակ կիրառելով հասանելի տեղեկատվությունը ստեղծել նոր կապեր, վերլուծել խնդիրներ, փոխարինել հնարավոր լուծումներ և գնահատել որոշման կամ դեպքի լուծումը:

Բաց գիրք քննության հնարավոր տարբերակներից են պրոբլեմի վրա հիմնված ուսուցման հանձնարարականները: Պրոբլեմի վրա հիմնված ուսուցման հանձնարարականը համարվում է պրոբլեմային ուսուցման միջուկ: Հաճախ, հանձնարարականը մի դեպք է, որը նկարագրում է պրոբլեմը, իրավիճակը կամ միջոցառումը իրենց իրական բովանդակությամբ: Ուսանողները լուծում են պրոբլեմը կիրառելով առկա նյութերը և 7-քայլ մեթոդը, որը շատ հաճախ է օգտագործվում պրոբլեմային ուսուցման ժամանակ:

Բանավոր քննություն

Տարբերակումներ: գնահատման վերանայում, ներկայացումներ:

Բանավոր քննությունը երկխոսության ձև է, որի ժամանակ հարցաքննողը հարցնում է հարցեր, որոնց ուսանողը պատասխանում է բանավոր: Բանավոր քննությունները ներառում են ուղիղ հաղորդակցում քննողի և ուսանողի միջև, որը հնարավորություն է տալիս քննողին մանրամասն քննել ուսանողի գիտելիքը տվյալ առարկայից կամ վերաձևակերպել իր հարցերը: Այս քննություն ձևը կարող է բաղկացած լինել հետևյալ փուլերից.

- Ուսանողը նախապատրաստվում է դասախոսի կողմից տրված հարցերին /գրավոր/
- Քննողը աչքի է անցկացնում ուսանողի նշքումները հանձնարարված հարցերի վերաբերյալ
- Ուսանողը տրամադրում է բանավոր բացատրություն պատասխանված հարցերի վերաբերյալ
- Քննողը հարցնում է լրացուցիչ հարցեր տրված թեման ավելի խորությամբ քննելու՝ ուսանողին հնարավորություն տալով շտկել իր իսկ պատասխանի հնարավոր սխալները կամ ճշգրիտ գնահատման համար:

Բանավոր քննոության տարբերակնումները ներառում են գնահատման վերանայում քննողի և ուսանողի և ուսանողի ներկայացումների միջև:

Ինքնուրույն աշխատանքի, խմբային աշխատանքի, ծրագրերի և այլն համար ուսանողը հնարավոր է տրամադրեն ստացած վերջնական արդյունքի վերաբերյալ ներկայացում: Երբ գնահատվում են այդպիսի ներկայացումները, քննողները կարող են հաշվի առնել ուրսանողի ընդհանուր ներևկայացման հմտությունները, ինչպես նաև ներկայացման բովանդակությունը:

Կատարողականի քննումը երկխոսություն է քննողի և ուսանող/ներ/ի միջև, որը որ ներկայացրել է ռեֆերատ հետագայում խորությամբ քննվելու նպատակով կամ հասկանալու թե որքանով է անհատը աջակցել խմբային աշխատանքին: Կատարողականի քննումը կարող է ընդգրկվել բանավոր քննության կազմում, որում քննական մասում ներառված են հարցեր վերաբերող ինքնուրույն աշխատանքին, խմբային աշխատանքին, ծրագրերին և այլն:

Մասնակցություն

Տարբերակումներ: հաճախում, կիրառում, բովանդակային մուտքագրում

Մասնակցությունը իր մեջ ներառում է գնահատման այն ուղին, որում ուսանողները մասնակցում են հաջորդող քննարկումներին և վերանայումներին, գործնական աշխատանքներին, հատուկ վարժությունների և այլն:

Այս վարժությունների ընթացքում, տարբեր տեսակետներ կարող են համարվել գնահատրման մի մաս, որոշ դեպքերում հաճախումը կարող է լինել գնահատման գործոն: Մեկ այլ դեպքում, քննողը հաշի է առնում այն հանգամանքը, թե ինչպես են ուսանողները իրենց դրսևորում վարժությունների կատարման ժամանակ /օրինակ՝ առցանց քննարկումների ժամանակ իրենց կարծիքի արտահայտում, ֆիզիկական ջանքերի գործադրում, հաստատակամության ցուցաբերում և այլն: Քանի որ հաճախումը բովանդակային առումով իր մեջ չի ընդգրկում վարպետացում ինչ-որ հմտություններում, այդ իսկ պատճառով էլ այն համարվում է ամբողջ գնահատման գործընթացի մի փոքրիկ մասը:

Իսկ երբ գնահատումը հաշվի է առնում ոչ միայն ոչ-բովանդակային, այլև բովանդակային որակը նրանց մասնակցության, ապա այսպիսի գնահատումը ընդգրկվում է վերջնական գնահատման մեջ:

Ուսանողների մասնակցությունը գնահատելու համար քննողը կարող է կիրառել մի շարք միջոցներ, ինչպիսիք են՝ գնահատման սանդղակներ կամ ստուգիչ ցանկ, դիտարկումների ցուցակ և այլն: Քննողը ինքն է որոշում, թե այլ լրացուցիչ գնահատման ձևեր հարկավոր է ընդգրկել, թե ոչ:

Փոխգնահատում

Ուսանողները ստուգում են մեկը մյուսի կատարած աշխատանքները, կատարողականը և աջակցությունը այն չափանիշների հիման վրա, որնք ստեղծվել են ուսուցչի կամ հենց իրենց կողմից: Փոխադարձ-գործընկերային գնահատումը կիրառվում է հատկապես խմբային աշխատանքների ժամանակ՝ գնահատելով իրենց ընկերներիվ, ուսանողը սովորում են, թե դեռ ինչ թերություններ ունեն իրենք և ինչպես կարող են զարգացնել իրենց կատարողականը: Այս գնահատման մեթոդը կարող է օգնել միայն

վերջնական գնահատմանը, սակայն այն չի որոշում արդյոք ուսանողը հաջողությամբ ավարտել է այդ դասընթացը, թե ոչ: Ուստի, Փոխադարձ-գործընկերային գնահատման նպատակը ուղղված չէ ուսուցման որակին բովանդակային առումով: Այս գնահատման մեթոդի կիրառումը սովորաբար պահանջում է և քննողների և ուսանողների կարողությունների և վերաբեևմունքի հարմարեցում: Ուստի, ուսանողները պետք է վերապատրաստվեն մինչև հետադարձ կապի տրամադրումը: Նրանք պետք է սովորեն, թե ինչպես կիրառեն չափանիշները, կազմեն բարձր որակի գնահատման զեկույց և ապահովեն հետադարձ կապ կառուցողական ձևով:

Թղթապանակ

Համապատասխան տերմիներ: վերջնական արդյունքի վերաբերյալ հաշվետվություն կամ թղթապանակ

Թղթապանակում ուսանողները ներկայացնում են իրենց ուսուցման գործընթացը կամ ձեռք բերված կոմպետենցիաները, ներառյալ ապացույցներ: Ապացույցը կարող է կազմված լինել ռեֆերատից, գնահատման հաշվետվություններից տրամադրչված դասախոսների կամ ընկերների կողմից, նկարներ, տեսանյութ և այլն: Թղթապանակները օգնում են դասախոսներին կազմել ճշմարիտ և ընդգրկուն պատկերացում ուսանողների ուսուցման գործընթացի վերաբերյալ ավելի երկար ժամանակահատվածի համար: Դրանք նաև օգնում են ուսանողներին վերհիշել կամ անդրադառնալ իրենց ուսուցման գործընթացին, իրենց զարգացմանը տրված ժամանակահատվածում և պարբերաբար իրենց քայլերին անդրադարձ կատարել այն ժամանակ երբ գնահատում և վերնլուծում են իրենց գործողությունները ուսուցման ընթացքում /ինքնագնահատում/: Թղթապանակների օգտագործումը սերտորեն կապված է պրակտիկաների հետ, քանի որ դրանք հնարավորություն են տալիս հասկանալու վավեր ուղին, որում ուսանողները կատարե են առաջադրանքներ բարդ մասնագիտական կամ հետազոտական միջավայրերում: Թղթապանակները կարող են պահվել ինչպես թղթային այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով:

Զեկույց կամ հաշվետվություն

Ուսանողների զեկույցի գնահատումը կատարվում է, երբ առանձին առանձին հանձնարարականները ավարտվել են և անհրաժեշտ է գնահատել նաև մի քանի մասնակիցների: սա ներառում է ոչ միայն վերջնական արդյունք այլև ուսուցման ամբողջ գործընթացը: Այսքեղ հաշվի է առնվում նաև, թե որքանով ուսանողները կարող են նկարագրել իրենց մոտեցումները, աբդրադառնալ այս մոտեցման դրական կամ բացասական տեսակետներին և այլընտրաքային կամ ապագա մոտեցումներին: Խորհուրդ է տրվում, մշակել գնահատման հատուկ չափանիշներ, ապահովել այն հանգամանքը, որ ուսանողները հստակ գիտեն, թե իրենցից ինչ է ակնկալվում զեկույցում, և ապահովել, որ գնահատումը կատավել է օբյեկտիվորեն:

Մոդելավորում

Տարբերակումներ: դերային խաղ

Գնահատում, որի ժամանակ ուսանողները կիրառում են իրենց գիտելիքը, կատարում որոշակի քայլեր, կամ ցույց տալիս որոշակի վարք կամ վերաբերմունք իրական իրավիճակների դերախաղերում: Այս պարագայում դասախոսը ընտրում է մասնագիտական և հետազոտական իրական կոնտեքստային էլեմենտներ, որոնք հնարավորորթւոն կտատ ուսանողին ներկայանլ իրենց երազած կոմպոտոնցիաներով: Ի տարբերություն վարքագծային գնահատման, սրանք ոչ իրական մասնագիտական կամ հետազոտական իրավիճակներ են, այլ կազմակերպվում են դասախոսի կողմից որպես դերային խաղ: Ուսանողների կոմպետենցիաները գնահատելու համար, կարող են օգտագործվել գնահատման սանդղակներ, դիտարկման ցուցակներ, կամ ցոտւգիչ ցանկեր և այլ գնահատման ձևեր:

Հմտությունների գնահատման թեսթ

Համապատասխան տերմիններ: արագաշարժության թեսթ, պրակտիկ թեսթ, պրակտիկայի գործընթացում իրականացվող թեստ:

Հմտությունների գնահատման թեստը ստեղծված է գնահատելու, թե որքանով են ուսանողները ի վիճակի ցուցաբերել իրենց կոմպետենցիաները համապատասխան ձևով: Ի տարբերություն վարքագծային գնահատումների, որը ժամանակ դիտարկվում է տարբեր մասնագիտական կոմպետենցիաները, հմտությունների գնահատման թեստը

դիտարկում է առանձին գործողության դիտարկման հիման վրա: Ուսանողների կոմպետենցիաները հիմնականում չափվում են պրակտիկ հանձնարարությունների միջոցով, որի ժամանակ ուսանողները ցուցաբերում են համապատասխան հմտությունը մասնագիտական միջավայրում և սովորաբար այն ներառում է մասնագիտական սարքավորումների կիրառումը (լաբորատոր սարքավորումներ, համակարգչային ծրագրեր, որոշակի աշխատանքային գործիքներ և այլն):

Գրավոր քննություններ /բազմակի ընտրությամբ թեստերով/

Գրավոր քննություն, որը բաղկացած է հարցերից որի դեպքում ուսանողները պետք է ընտրեն ճիշտ պատասխանը, ի տարբերություն բաց թեստերի, որի դեպքում ուսանողները իրենք են ձևակերպում պատասխանները: Բազմակի ընտրությամբ հարցերը ընդգրկում են պրոբլեմի ձևակերպումը և մի քանի հնարավոր տարբերակներ, որոնք են ոչ ճիշտ պատասխաններ և մեկ ճիշտ պատասխանը: Սկզբում խնդիրն է ձևակերպվում և նկարագրվում, այնուհետև հարցն է ձևակերպվում:

Ճիշտ/սխալ հարցերում տարբերակներ են առաջադրվում և ուսանողները բացահայտում են, թե արդյոք ճիշտ է թե սխալ:

Համապատասխանեցնող հարցերը բաղկացած են մի քանի ձևակերպված պրոբլեմներից և տարբերակներից: Ուսանողները համապատասխանեցնում են ամեն մի պրոբլոմը իր լուծման հետ:

Հաջորդական հարցերը բաղկացած են մի քանի տարբերակներից, որոնք դասավորվում են հերթականությամբ՝ հիմնված որոշակի սկզբունքների վրա: Պատասխանի տարբերակները ընդգրկում են մի քանի ձևով ընտրված դասավորվածություններ, որոնցից ուսանողները ընտրություն են կատարում:

Գրավոր քննություն բաց հարցերի միջոցով: /կարճ-պատասխան հարցեր, էսսե հարցեր/

Այս մեթոդը գրավոր քննություն է, որը բաղկացած է հարցերից, որի պատասխանները ուսանողները իրենք են ձևակերպում, ի տարբերություն փակ հարցերի, որի դեպքում ուսանողները ընտրում են հնարավոր տարբերակներից:

Կախված պատասխանի երկարությունից և կառուցվածքից բաց հարցերի մի քանի տարբերակներ կան՝ օրինակ կարճ-պատասխան հարցերը կամ էսսե հարցերը:

Գնահատման չափանիշներ

Այժմ անդրադառնանք գնահատման չափանիշներին: Եթե գնահատման մեթոդները հանձնարարություններն են, որը ուսանողը պետք է կատարի (օրինակ էսսե կամ ռեֆերատ գրելը), ապա գնահատման չափանիշները այն հիմքն են, որի հիման վրա կատարվում է գնահատումը:

Օրինակ՝

Ելքային արդյունք: Դասընթացի ավարտին ուսանողը պետք է կարողանա բացատրել ակադեմիական էսսե գրելու առանձնահատկությունները:

Գնահատման մեթոդ: Էսսե:

Գնահատման չափանիշ: Էսսեն պետք է լինի տրված թեմայի վերաբերյալ՝ 1500-ից 2000 բառի սահմաններում: Էսսեն պետք է ամբողջապես ներկայացնի վերնագիրը, պետք է լինի հստակ ակադեմիական գրված և պետք է ունենա համապատասխան կառուցվածք:

Այնուամենայնիվ, այսքանով գործը չի ավարտվում, պետք է համոզված լինել, որ գրված ելքային արդյունքը կծառայի իր նպատակին: Իսկ դրա համար անհրաժեշտ է մշակել դասավանդման և ուսումնառության ռազմավարություն, որոնք կլինեն ուսանողի դեպի ելքային վերջնարդյունքերի հասնելու ճանապարհին հատկանշական օգնիչ ուժ: Այս ամենի հետ մեկտեղ պետք է համոզված լինել, որ ուսանողը ի վերջո ձեռք է բերել այդ գիտելիքը, հմտությունն ու կարողությունը առարկան յուրացնելու հետո: Այս քայլը իրականացնելու համար պետք են գալու գնահատման մեթոդները, չափանիշները, որոնք հնարավորություն են տալիս ստուգել և գնահատել ուսանողի համապատասխան ձեռքբերումները: Եվ այս ամենը կրում է պարբերական բնույթ, որի պարբերականությունն էլ ապահովվում է հետադարձ կապի միջոցով:

Գնահատման չափանիշներ և չափորոշիչներ

Ա. Թիմային աշխատանքի ներկայացման գնահատում

Գնահատման չափանիշներ	Առավելագույն միավորը	Եթե՝ (թերացումներ)	Գնահատման առավելագույն միավորից հանվում է՝
Թիմային աշխատանքի ներկայացումը	*30*	1.Թիմում տեղի է ունենում սխալ դերաբաշխում, սակայն դա մեծ ազդեցություն չունի ընթացքի վրա։	5
		Ելույթն անկազմակերպ է, չկա հստակ դերաբաշխում	10
		Թիմի որոշ անդամներ մյուսներին արտահայ տվելու հնարավորություն չեն տալիս։	10
		2.Անհատական ելույթները տրամաբանորեն հաջորդեցին իրար, կապը խղվեց միայն որոշ դեպքերում։	5
		ական ելույթները տրամաբանորեն հաջորդեցին միմյանց, սակայն որոշ դեպքերում կապը հստակ չէր։	10
		Անհատական ելույթների միջև բացակա յում էր տրամաբանական կապը։	15
Բովանդակությունը	*40*	1.Փաստերն ու օրինակները հիմնականում մանրամասն էին, ճշգրիտ և համապատասխան, սակայն կային վրիպումներ։	5
		Փաստերում և օրինակներում բացակայում են մանրամասնությունը, օրինակները անհամապատասխան էին և անհասկանալի։	10

		2.Տեսություններին հղումներ արված են, բայց դրանք կամ ոչ հստակ էին նկարագրված կամ անհամապատասխան ձևով օգտագործված։	5
		Այն տեսությունները, որոնց հղումներ էր կատարված, Նկարագրված էին ոչ հստակ և անհամապատասխանորեն էին օգտագործված, կամ դրանց ընդհանրապես հղում արված չէր։	10
		3.Վերլուծությունների, քննարկումների և եզրակացությունների միջև կապը ակնհայտ չէր կամ Ենթադրվում էր, սակայն ճշգրտորեն կապված չէին օրինակների, փաստերի և տեսությունների հետ։	5
		Ոչ մի տրամաբանական կապ չկար վերլուծու թյունների, քննարկումների օրինակների, փաստե րի և տեսությունների միջև։	10

Բ. Ուսանողի՝ Թիմում աշխատելու արդյունավետության փոխգնահատում

Գնահատման չափանիշներ	Առավելագույն միավորը	Առկա թերացումներ	Գնահատման չափորոշիչ (Միավորը նվազում է)
Թիմային աշխատանքի սկզբնական փուլ	***10***	Մասնակցություն չի ունեցել առաջա դրանքի կատարման բովանդակու թյան, ընթացքի և կարգի վերաբերյալ առաջարկու թյունների քննարկմանը	**10**
Թիմային աշխատանքի կատարման փուլ	***10***	Չի մասնակցել առաջադրանքը կազ մող խնդիրների լուծման եղանակների վերաբերյալ առա ջարկությունների քննարկմանը	**10**
		Չի մասնակցել խմբի այլ անդամ ների առաջարկությունների (վարկածների, գաղափարների)	

		քննարկումներին /բանավեճերին)	
Ընդհանուր կազմակերպական չափանիշներ	***10***	Չի պահպանել սահմանված աշխատակարգը և շեղել է խմբի աշխատանքը դեպի ոչ արդյունա վետ քննարկումներ	**10**

Նախապատրաստական մշակումների (կոնսպեկտների) գնահատում *(գնահատումը կատարվում է դասախոսի կողմից)*			
Բովանդակությունը և առաջացած հարցերի պատասխանները	100	Կոնսպեկտի բովանդակությունը մասամբ է համապատասխանում նյութին	50
		Կոնսպեկտի բովանդակությունը հիմնականում համապատասխանում է նյութին	20
		Ուսանողը չի կարողացել հստակ պատասխանել առաջացած հարցերին	30
		Ուսանողը որոշ չափով կարողացել է պատասխանել առաջացած հարցերին	20
		Ուսանողը ընդհանուր առմամբ կարողացել է պատասխանել առաջացած հարցերին	10

Բանավոր ելույթների գնահատում

Գնահատման չափանիշները	Գնահատման ստանդարտները		
			Հանվում է միավոր
Խոսքի տրամաբանական կառուցվածքը	30	Լսարանը չի կարողանում հասկանալ նյութը, քանի որ մտքերի տրամաբանական հաջորդականություն չկա։	**20**
		Լսարանը դժվարությամբ է հետևում մտքերի ընթացքին, քանի որ խոսքի տրամաբանական շղթան հաճախ ընդհատվում է։	**15**
		Ուսանողի մտքերն հիմնականում ունեն տրամաբանական հաջորդականություն, և լսարանը կարողանում է հետևել խոսքաշարին։	**5**

		Ուսանողի մտքերն ունեն տրամաբանական կուռ կառուցվածք, հետաքրքիր ընթացք, բերված օրինակները դիպուկ են և ուշագրավ, լսարանը ներգրավված է և հետաքրքրված։	**0**
Առարկայի իմացությունը	60	Ուսանողի իմացությունը թերի է, չի կարողանում հարցերին սպառիչ պատասխան ներ տալ։	**30**
		Ուսանողը նյութը լավ չի յուրացրել և կարողանում է պատասխանել միայն տարրական հարցերին։	**20**
		Ուսանողը հեշտությամբ է գտնում բոլոր հարցերի պատասխանները, սակայն չի կարողանում հիմնավորել իր պատասխան ները։	**10**
		Ուսանողը ունի հիմնարար գիտելիքներ, տալիս է սպառիչ պատասխաններ՝ մեկնա բանություններով նգաղափարական նոր մոտեցումներով։	**0**
Կապը լսարանի հետ	10	Ուսանողի զեկույցը անկենդան է, բացակա յում է կապը լսարանի հետ,չի կարողանում ներկայացնել ոչինչ։	**10**
		Ուսանողը մեծ մասամբ ընթերցում է զեկույցը, երբեմն-երբեմն փորձում է կապ հաստատել լսարանի հետ։	**5**
		Ուսանողը մեծ մասամբ պահպանում է կապը լսարանի հետ, սակայն հաճախ անդրադառնում է գրառումներին։	**3**
		Ուսանողը պահպանում է կապը լսարանի հետ՝ հազվադեպ անդրադառնալով գրառումներին։	**0**
	100		

Էսսեի գնահատումը

1. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ					
	Տրվում է		Հանվում է		Հանվում է
Շարադրանքը համապատասխանում է տրված հարցադրմանը	15 միավոր	Շարադրանքը մասնակի է համապատասխանում հարցադրմանը	**7 միավոր**	Շարադրանքը չի համապատասխանում հարցադրմանը	**15 միավոր**
2. ՓԱՍՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ					
Փաստարկները տրամաբանորեն կազմակերպված են	20 միավոր	Հատվածաբար բացակայում են փաստարկների հետևողականությունը	**10 միավոր**	Փաստարկները հետևողական չեն, տրամաբանորեն փոխկապակցված չեն	**15 միավոր**

		և տրամաբանորեն փոխկապակցվածությունը			
3. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ					
Ինքնուրույն և ստեղծագործական է	25 միավոր	Առկա է ինքնուրույնությունը,բայց ստեղծագործական չէ կամ հակառակը	**12 միավոր**	Ինքնուրույնության և ստեղծագործականության պակաս կա	**25 միավոր**
4. ՈՃԸ					
Ակադեմիական ոճը պահպանված է	10 միավոր	Խախտվում է ակադեմիական ոճը	**5 միավոր**	Ակադեմիական ոճը պահպանված չէ	**10 միավոր**
5. ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ					
Հստակ և լավ ձևավորված աշխատանքը	10 միավոր	Աշխատանքում առկա են ձևավորվման շեղումներ	**5 միավոր**	Անփույթ և դժվար ընթեռնելի աշխատանք	**10 միավոր**
6. ԾԱՎԱԼԸ					
Ծավալը համապատասխանում է սահմանված նորմին	5 միավոր	Որաշակիորոն խախտված է ծավալային նորմը	**2 միավոր**	Չափազանց երկար/կարճ աշխատանք է	**5 միավոր**
7. ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ					
Շարահյուսական,քերականական և այլ սխալներ չկան	5 միավոր	Առկա են մի քանի շարահյուսական , քերականական սխալները	**2 միավոր**	Շատ են շարահյուսական քերականական սխալները	**5 միավոր**
8. ՀՂՈՒՄՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ					
Մեջբերելիս հղումներն արված են	10 միավոր	Մեջբերելիս հղումներն ոչ միշտ են առկա	**5 միավոր**	Մեջբերելիս հղումներ չկան	**10 միավոր**
	100				

Գրավոր աշխատանքներ

(Վերլուծական, հետազոտական և

այլն)

Չափանիշ	Առավելագույն միավորը	Աշխատանքի կատարման չափանիշները /Ընդհանուր պահանջներ/	Պահանջը առկա է մասնակի	Պահանջը բացակայում է
			Հանվում է միավոր	
Տեսական նյութի իմաստ և ըմբռնում	2 0	հստակորեն և ամբողջական ձևով սահմա նում է դիտարկվող հասկացությունները բերելով համապատասխան օրինակներ	**2**	**5**
		• օգտագործվող հասկացությունների համա պատասխանություն թեմային,	**3**	**5**
		• աշխատանքի կատարման ինքնուրույնու թյուն	**5**	**10**
Տեղեկատվության վերլուծություն և գնահատում	40	հմտորեն օգտագործում է համեմատության և ընդհանրացման օրինակները հասկացու թյունների և երևույթների փոխկապակցվածու թյան վերլուծության համար, • ընդունակ է բացատրելու այլընտրանքային	**5**	**8**
		դիրքորոշումները ուսումնասիրվող խնդրի նկատմամբ և հանգելու հավասարակշռված եզրակացության,	**5**	**8**

		օգտագործվող տեղեկատվության ծավալը (ուսանողն օգտագործում է	**5**	**8**

		Տեղեկատվության ամբողջական աղբյուրներ)		
		հիմնավորված ձևով գրաֆիկների և գծապատ կերների միջոցով մեկնաբանում է տեքստում առկա տեղեկատվությունը,	**5**	**8**
		տալիս է սեփական գնահատական խնդրի վերաբերյալ	**5**	**8**
Դատողությունների կառուցում	30	Շարադրանքի հստակություն և պարզություն	**3**	**6**
		ապացույցների կառուցման տրամաբանու թյուն,	**3**	**6**
		• առաջադրված թեզիսները ուղղորդվում են գրագետ հիմնավորումով,	**3**	**6**
		• բերվում են տարբեր տեսակետներ և անհա տական գնահատականներ,	**3**	**6**
		• ստացված արդյունքների և դրանց մեկնա բանությունների ընդհանուր ձևը համապա տասխանում է ուսումնասիրվող նյութին վերաբերվող գիտական հոդվածի ժանրին	**3**	**6**
Աշխատանքի ձևավորում	1 0	Աշխատանքը համապատասխանում է մեջբերումների օգտագործվման և ձևակերպման հիմնական պահանջներին,	**1**	**2**
		• պահպանված են հայերենի բառային, դարձվածաբանական, քերականական և ոճական նորմերը,	**1**	**2**
		• տեքստը ձևակերպված է համաձայն հայերենի ուղղագրության և կետագրության կանոնների,	**1**	**2**
		տեքստի ձևակերպումը համապատասխա նում է առաջադրանքի կատարման պահանջվող կանոններին:	**1**	**4**
	100			

	ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԸ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
	Իրադրային թեստեր (ուսումնական իրադրության իմիտացիոն մեթոդներ)	Ենթադրում են իրական իրավիճակների իմիտացիա /նմանակում/: Հաճախ կիրառվում է կոնկրետ իրավիճակի վերլուծության ձևով;

Մանկավարժական իրավիճակների վերլուծություն		Տարբերակներից է հաջորդական իրավիճակների մեթոդիկան, որտեղ յուրաքանչյուր նոր իրավիճակի լուծում առաջարկվում է նախորդի արդյունքների հիման վրա:
	Քեյսեր	Ինֆորմացիա, որը նկարագրում է իրականում տեղ գտած իրադարձություն՝ ի տարբերություն այլ իրադրային խնդիրների՝ գործնական, իմիտացիոն խաղերի: Կարող են ներկայացված լինել տպագիր, վիդեո, աուդիո և այլ եղանակներով: Պետք է ներառի. էքսպոզիցիա /ձևավորում/, առաջացում, լուծում, առաջ բերի ապրումակցում, կապված լինի մասնագիտական գործունեության հետ
Թ Ե Ս Տ Ե Ր	• **Լրացման հարցեր**	Ուսանողից պահանջվում է լրացնել առաջադրված պնդման մեջ բաց թողնված բառերը (մասերը):
	• **Ընկալում**	Առաջադրված տեքստին վերաբերող հարցեր, որոնց տրված պատաս-խանները գնահատում են ուսանողի՝ բառերի, արտահայտությունների, մասնագիտական տերմինաբանության ընկալումը:
	• **Փակ հարցեր**	Պահանջվում է տրված հարցերի պատասխանների տարբերակներից ընտրել ճիշտը: Պատասխանների որոշ տարբերակներ կարող են հիմնավոր թվալ, բայց ճիշտ չլինել:
	• **Հարցերի և պատասխանների համապատասխանություն**	Պահանջվում է գտնել համապատասխանություն տրված հարցերի և պատասխանների շարքերում:
	• **Հակիրճ պատասխան պահանջող հարցեր**	Այս տիպի հարցերը պահանջում են նախապես սահմանված՝ մի քանի բառից բաղկացած պատասխաններ և կարող են պարունակել նաև թվեր, գծապատկերներ, գրաֆիկներ, դիագրամներ և այլն: Թեև այս հարցերը նախատեսված են հիմնականում մնացորդային գիտելիքները ստուգելու համար, սակայն կարող են օգտագործվել նաև գիտելիքի, օրինակ՝ մաթեմատիկական հասկացությունների կիրառման ունակությունը գնահատելու համար:
	• **Կառուցակարգված հարցեր**	Կառուցակարգված հարցերի առանցքը որևէ իրավիճակի նկարագրությունն է, որին հաջորդում են դրան վերաբերող մի շարք հարցեր: Այդ նկարագրությունը կարող է պարունակել տեքստ, գծապատկեր, նկար, տեսագրություն և այլն:
	• **Այլընտրանքային պատասխանով հարցեր**	Այս տիպի հարցերի պարագայում ուսանողից պահանջվում է պատասխանել, արդյոք բերված պնդումը ճիշտ է, թե սխալ: Սովորաբար օգտագործվում է տեղեկություններ մտաբերելու կամ տարանջատելու ունակությունները գնահատելու համար:
		Թղթապանակ ասելով՝ հասկանում են անձնական ձեռքբերումների գրանցման, հավաքագրման և

	Թղթապանակ / Պորտֆոլիո /	գնահատման մատյան,որտեղ հավաքվում, դասակարգվում են ուսանողի աշխատանքները՝ դրանց արդյունքները, որպեսզի հետագայում վերլուծի, կատարված աշխատանքներն ու շտկումներ կատարի, գնահատի կատարածը, պլանավորի իր հետագա անելիքները: Թղթապանակի առավելություններն են. • խրախուսում ենք ուսանողին, նրա սովորելու գործընթացը • ուսանողը դառնում է ակտիվ, մասնակցում է իր սովորելու գործընթացի կազմակերպմանը • ձևավորվում է սովորելու նպատակ • ուսումնառության վերջնական արդյունքը ուսանողը կարող է կանխատեսել հենց սկզբից • ուսանողը գիտի իր յուրաքանչյուր քայլի նպատակը • վերլուծական աշխատանքների լայն հնարավորություն է ընձեռում • որոշ ժամանակ անց ուսանողը կարող է նայել անցածին, ստացված արդյունքները համադրել • պարզ երևում են առաջընթացը և դրական փոփոխությունները • թղթապանակն իր մեջ կարող է ընդգրկել բազմազան տեղեկատվություն՝ տեքստեր, նկարներ, ձայնագրություններ, ֆիլմեր, ցուցադրություններ • այն կարելի է հեշտությամբ փոփոխել, լրացումներ կատարել • դրանք հասանելի են բոլորին:
Գրավոր ստուգում և բանավոր հարցում	• **Բանավոր (կամ անհատական) հարցազրույց**	Սա կառուցակարգված զրույց է (սովորաբար՝ դեմ առ դեմ), անմիջականորեն ուսանողից տեղեկություններ ստանալու նպատակով: Այս գործիքը հատկապես կիրառելի է, երբ անհրաժեշտ են գործընթացների իմացության կամ փորձառական ուսումնառության վկայություններ: Պատասխանները կարող են արձանագրվել հարցաթերթի տեսքով:
	• **Հարցաթերթ**	Հարցաթերթի միջոցով, ըստ էության, իրականացվում է կառուցակարգված գրավոր հարցազրույց, որը վերաբերում է կատարողականության որոշակի բնագավառի: Ի տարբերություն անհատական հարցազրույցի՝ սա իրականացվում և քննվում է ստանդարտ պայմաններում:
	• **Էսսե**	Փոքր ծավալով և ազատ բնույթի շարադրություն է, որը ներկայացնում է հեղինակի անհատական տպավորությունը կոնկրետ հարցերի նկատմամբ:
Բանավոր ներկայացում	**Զեկուցում, ռեֆերատ, PP-ներկայացում**	Ուսանողից պահանջվում է ներկայացնել նախապես պատրաստված խոսք՝ հղման, զեկուցման կամ կարծիքի արտահայտման տեսքով: Բանավոր ներկայացումը կարող է օգտագործվել որպես գրավոր

		պատասխանի այլընտրանք կամ որպես ինքնուրույն մեթոդ (եթե, օրինակ՝ անհրաժեշտ է գնահատել ուսանողի բուն բանավոր խոսքը):
Գործնական աշխատանք	• **Կատարում**	Ուսանողից պահանջվում է որոշակի պայմաններում ցուցադրել որևէ գործնական խնդրի կատարում՝ դրսևորելով համապատասխան հմտություններ, տեխնիկա, գիտելիք և ընկալում**:**
	• **Գործնական վարժություն**	Ուսանողից պահանջվում է ցուցադրել մի շարք գործնական հմտություններ: Գնահատումը կարող է իրականացվել գործողությունների արդյունքի (արտադրանքի), դրանց ընթացքի կամ այդ երկուսի համադրության հիման վրա:
	• **Առաջադրաք**	Հանձնառությունը որևէ խնդիր լուծելու առաջադրանք է՝ հստակ ուղեցույցներով, կառուցվացքով և տևողությամբ: Հանձնառությունն ավելի կառուցակարգված է և սակավ ազատ, քան նախագիծը: Մեթոդաբանության ու բովանդակության տեսանկյունից ուսանողներին բավական սահմանափակ ընտրության հնարավորություն է տրվում:

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ինչպես արդեն նշվեց դասախոսակենտրոն ուսուցումից ուսանողակենտրոն ուսուցման անցման գործընթացը ենթադրում է նաև, որ դասընթացը պետք է կառուցվի այնպես, որ ուսանողը ձեռք բերի ակնկալող վերջնարդյունքները: Վերջնարդյունքների ձևավորման գործընթացն կախված է նաև դասախոսի կողմից ընտրած դասավանդման և ուսումնառության մեթոդներից, ինչպես նաև ուսանողի գնահատման մեթոդներից:

Կախված առարկայի առանձնահատկություններից, յուրաքանչյուր դասախոսը ինքը պետք է ընտրի իր առարկային համապատասխան ուսուցանման մեթոդը:
Առանձնացնում են ուսուցման մի քանի մոդելներ՝

1. *պասիվ* - ուսանողը հանդես է գալիս որպես ուսուցանվող «օբյեկտ» (լսում և նայում է),
2. *ակտիվ* – ուսանողը հանդես է գալիս որպես ուսուցանվող «սուբյեկտ» (ինքնուրույն աշխատանքներ, ստեղծագործական առաջադրանքներ)
3. *ինտերակտիվ* (նորարական)՝ փոխներգործություն: Ինտերակտիվ ուսուցման մեթոդի ներդրումը ժամանակակից կրթական համակարգում ներկայումս ամենահաջողվածն է ուսանողների պատրաստման գործընթացում:

Ինտերակտիվ մեթոդի դեպքում ուսանողը ներգործության օբյեկտից վերածվում է փոխներգործության սուբյեկտի: Նա ակտիվորեն մասնակցում է կրթության գործընթացին, հետևելով իր անհատական ուղուն և այս դեպքում բացակայում է կրթական գործընթացին մասնակցող անդամների որևէ գաղափարի գերիշխանությունը:

Ուսանողակենտրոն ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է դասընթացը կազմակերպել այնպես, որ ուսանողը հայտնվի դասընթացի կենտրոնում, ձգտի ինքնուրույն ձեռք բերել հարցերի պատասխանները, սովորի օգտվել գրականությունից, կարողանա արագ գտնել և վերամշակել իրեն անհրաժեշտ տեղեկությունները, քանի որ ներկա տեղեկատվական հասարակությունում արդի մասնագետները անընդհատ ստիպված են յուրացնելու նոր գիտելիքներ, այդ պատճառով այսօրվա կրթության առաջանային խնդիրն է պատրաստել ինքնակրթությամբ զբաղվելու ունակ, ստեղծագործող մասնագետ:

Այս ամենի վառ ապացույցն է Էդգար Դեյլի՝ <<Փորձի կոն>> մոդելը (1960թվ.), որը իր մեջ ներառում է մի շարք տեսություններ ուսուցման գործընթացի վերաբերյալ: Ըստ նրա՝ ուսանողները ձեռք են բերում ավելի շատ տեղեկատվություն, երբ նրանք անում են ինչ-որ բան, ի տարբերություն՝ լսելու, կարդալու կամ դիտարկելու (տե՛ս էջ 19):


Մարդիկ հիմնականում հիշում են …
Մարդիկ ի վիճակի են …
(վերջնարդյունքներ)
Իրենց կարդացածի 10%-ը
Կարդալ
Սահմանել
Նկարագրել
Դասակարգել
Բացատրել
Իրենց լսածի 20%-ը
Լսել
Տեսնել պատկերներ
Իրենց տեսածի 30%-ը
Նայել տեսահոլովակներ
Ցուցադրել
Կիրառել
Փորձարկել
պրակտիկայում
Իրենց լսածի և տեսածի 50%-ը
Այցելել ցուցադրությունների
Դիտել ցուցադրումը
Մասնակցել աշխատաժողովների/սեմինարների
Իրենց ասածի և գրածի 70%-ը
Ձևավորել համագործակցային դասեր
Վերլուծել
Ձևավորել
Ստեղծել
Գնահատել
Նմանակել կամ մոդելավորել դասերը սեփական փորձով
Իրենց արածի 90%-ը
Նպատակաուղղված փորձարկում - անցնել իրական փորձության միջով

Այստեղ տեղին է վերհիշել Չինական հին ասացվածքը (որը նաև ասոցացվում է Կոնֆուցիոս հետ) ՝ ըստ որի՝

Ինչ լսում եմ, մոռանում եմ,
Ինչ տեսնում եմ, հիշում եմ,
Ինչ անում եմ, հասկանում եմ:

Ստորև նկարագրված են ինտերակտիվ մեթոդներ, որոնք կարելի է կիրառել դասընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Փորձառնական դաս

Ինտերակտիվ ուսուցում, որի դեպքում ուսանողները՝ մանկավարժի ուղղորդմամբ, ձեռք են բերում գիտելիքներ և կոմպետենցիաներ առանձին թեմաների դասավանդման մեթոդները քննարկելու և հետազոտելու միջոցով, այնուհետև կիրառելով այն ուսումնասիրում են ուսանողների առաջընթացը: Այս մեթոդի առավելություններից է ուսանողների ներկայությունը: Ղեկավարը խրախուսում է ուսանողներին համագործակցել, ակտիվ մտածել և մասնակից դառնալ այդ գործընթացներին:

Ցուցադրում

Կոլեկտիվ ուսուցման եղանակ, որի դեպքում դասախոսը ուսանողների խմբին ցուցադրում է որևէ գործողություն կամ տեխնիկա: Ուսանողները հիմնականում լսում են, գրառումներ են կատարում և փորձում են կրկնօրինակել ցուցադրված գործողությունը կամ տեխնիկան: Այս մեթոդի դեպքում դասախոսը փոխանցում է գիտելիքը ուսանողներին, սակայն սովորաբար չի կարողանում ամբողջությամբ ստուգել, թե արդյոք բոլոր ուսանողները հասկացել են և արդյոք պետք է որոշ ուսանողներին կրկին անգամ ցուցադրել տվյալ գործողությունը:

Գիտելքների կիրառման արտահամալսարանական մեթոդ

Ինքնուրույն ուսումնառության գործընթաց, որի դեպքում ուսանողները իրենց գիտելիքները, կարողությունները և հմտությունները կիրառում են համալսարանից

դուրս ընտրված վայրում: Այս մեթոդի նպատակը ուսանողներին սովորեցնելն է կիրառել իրենց գիտելիքները առօրյա կյանքի տարբեր իրավիճակներում: Հետևաբար կարևոր է, որ դասախոսը կամ այլ մասնագետները ցուցաբերեն անհատական մոտեցումներ և գնահատեն թե ինչպես է ուսանողը կիրառում իր ձեռք բերած գիտելիքը տվյալ իրավիճակում և հարկ եղած դեպքում միջամտեն գործընթացին:

Խմբային աշխատանք

Անհատական և համագործակցային ուսուցման գործընթաց, որի դեպքում ուսանողները իրականացնում են իրենց գործողությունները խմբում: Այդ գործողությունների արդյունքում ստեղծվում է վերջնական արդյունք, որը պետք է գնահատվի դասախոսի կողմից: Այս գնահատականը դրվում է առանձին ուսանողներին և/կամ խմբերին և կարող է ուղեկցվել քննարկմամբ: Դասախոսի պարտականություններն են որոշել վերջնական հանձնարարություն, գնահատել վերջնական արդյունքը և կատարման գործընթացները: Այնուհետև դասախոսը կարող է տալ բարելավման առաջարկներ:

Ուղղորդված ինքնուսուցում (Guided self-study)

Ուղղորդված անհատական ուսուցում, որի դեպքում ուսանողները ինքնուրույնաբար ձեռք են բերում գիտելիքներ, հմտություններ և կարողություններ: Ուղղորդված ինքնուսուցման դեպքում ուսանողին տրվում է դասավանդման նյութերը՝ որոնցից են ընդհանրական նկարագրությունները, առարկայի թեմաները, հարցաշարը, թեստերը, դիագրամները, բանալի բառերը, ամփոփումները, առարկայի նպատակները և խնդիրները, հանձնարարությունները, օրինակները, առաջարկությունները և այլն: Ինքնաուսուցումը տարբերվում է հեռավար ուսուցումից, քանի որ այն ներառում է անհատական շփում:

Անհատական աշխատանք (Independent work)

Անհատական աշխատանքը մեթոդ է, որի դեպքում ուսանողները անհատականորեն իրականացնում են գործողություններ՝ առանց ղեկավարման: Այս գործողությունները միտված են ստեղծելու վերջնական արդյունք, որը գնահատվում է և կարող է ուղեկցվել քննարկմամբ: Դասախոսի պարտականություններն են որոշել

համապատասխան հանձնարարություն, գնահատել վերջնական արդյունքը և կատարման գործընթացները: Այնուհետև դասախոսը կարող է տալ բարելավման առաջարկներ:

Ինտեգրված սեմինար

Ուսումնառություն, որը իրականացվում է տարբեր ոլորտների տարրերի ինտեգրման հիման վրա: Ինտեգրված սեմինարների կարող են պարունակել քննարկումներ, զրույցներ, վարժություններ, դերային խաղեր, կարճ հանձնարարություններ և այլն: Սովորաբար ուսանողների քանակը սահմանափակ է, հետևաբար ղեկավարը կարող է ակտիվորեն վերահսկել ուսանաղների առաջընթացը, անհատական մոտեցում ցուցաբերել և անհրաժեշտության դեպքում միջամտել ուսանողների գործունեությանը:

Դասախոսություն

Կոլեկտիվ ուսուցում, որի դեպքում դասախոսը փոխանցում է գիտելիքը ուսանողների խմբին: Ուսանողները հիմնականում լսում են և գրառումներ են կատարում, սակայն դասախոսները կարող են տալ հարցեր կամ հանձնարարականներ: Սովորաբար դասախոսը հնարավորություն չունի վերահսկել արդյոք ուսանողները ձեռք են բերել համապատասխան գիտելիքը և ովքեր կարիք ունեն նորից լսելու տվյալ դասախոսությունը որոշակի հատվածներ:

Վարժությունները՝ որպես դասավանդման միջոց ներկայացվում և լուծվում են սովորաբար դասախոսի կողմից: Դրա հիմնական նպատակն է ցուցադրել լուծման եղանակներ առանց ուսանողների միջամտության:

Կլինիկական լեկցիաների դեպքում, դասախոսը կարող է դիտարկել հիվանդի մեկ դեպք և սկսել քննարկում այդ դեպքի հիման վրա:

Լեկցիաները կարող են ներկայացվել էլեկտրոնային եղանակով կամ վիդեո կոնֆերանսների միջոցով:

Պատասխան-դասախոսության ընթացքում բովանդակությունը քննարկվում է ինտերակտիվ եղանակով և հարցերի ներկայացման եղանակով: Ուսանողները նախապատրաստվում են լեկցիային և ուսումնասիրում են նախապես տրամադրվող

նյութը: Պատասխան-դասախոսության ընթացքում դասախոսը քննարկում է հարցերը , մեկնաբանություններ և քննադատական վերլուծություններ է իրականացնում և պարզաբանում է անհասկանալի հարցերը: Ուսանողները հարցեր են տալիս և պատասխանում են հնչեցված հարցերին: Ինտերակտիվ և պատասխան դասախոսության հիմնական նպատակն է որ ուսանողները սովորեն ակտիվ և քննադատական եղանակով և սովորեն իրարից:

Մագիստրոսական թեզ

Մագիստրոսական թեզը հետազոտական ծրագիր է, որը պետք է համապատասխանի կրթական աստիճանի կողմից սահմանվող որոշակի պահանջներին:

Միկրոդասավանդում

Ինքնուրույն ուսումնառության գործընթաց, երբ ուսանողները ներկայացնում են անհատական կամ խմբային աշխատանքի արդյունքում նախօրոք պատրաստված նյութը: Այս մեթոդի նպատակն է ձևավորել կարողություններ ուսանողների մոտ վերամշակելու տրված նյութը(ընտրեն, վերլուծեն և այլն), ինչպես նաև զարգացնելու ներկայացման և դասավանդման հմտությունները: Դասախոսը և այլ ուսանողները մեկնաբանություններ են իրականացնում կապված ուսանողի աշխատանքի ներկայացման, դասավանդման հմտությունների հետ, ինչպես նաև առաջարկություններ են անում բարելավման համար:

Օնլայն խմբային քննարկում

Ինտերակտիվ ուսումնառության գործընթաց, որի դեպքում ուսանողները հաղորդակցվում են օնլայն եղանակով՝ գրառումներ կատարելով և պատասխանելով այլ ուսանողների գրառումներին: Որպեսզի քննարկումը լիովին իրականացվի դասախոսը սովորաբար ներկայացնում է թեման կամ առաջարկը, հարցը կամ որևէ խնդրի նկատմամբ սեփական տեսանկյունը և դիտարկումները: Օնլայն քննարկման նպատակն է խրախուսել ուսանողներին խորությամբ քննարկել և հասկանալ տվյալ նյութը: Այդ քննարկումները օգնում են ուսանողներին զարգացնել մասնագիտական կարծիք և օգնել նրանց կարողանալ ներկայացնել իրենց տեսակետը: Սովորաբար խմբային

քննարկումները կիրառվում են դասավանդման այլ մեթոդների հետ զուգահեռ: Դասախոսի հիմնական դերն է մեկնաբանումներ իրականացնել ուղղված ուսանողների գրառումներին, մասնակցել քննարկումներին, ամփոփել և ղեկավարել քննարկումը, ներկայացնել քննարկման նոր թեմաներ և խրախուսել ուսանողներին մասնակցել քննարկումներին:

Պրոբլեմային իրավիճակի վրա հիմնված դասախոսություն

Ինտերակտիվ ուսումնառության եղանակ, երբ դասավանդողը դասավանդում է փոքր խմբով ուսանողներին՝ ուսումնասիրելով որևէ պրոբլեմային իրավիճակ, գտնելով լուծման ուղիներ և հանգելով վերջնական եզրակացության: Պրոբլեմային ուսուցման դեպքում ոչ թե դասախոսն է առաջարկում գիտելիքներ ուսանողներին, այլ ուսանողներին են փնտրում և գտնում պահանջվող գիտելիքը՝ պրոբլեմի հիման վրա: Դասախոսի հիմնական դերը պրոցեսը համակարգելն է՝ ուսանողների ուսումնառությունը հեշտացնելու նպատակով: Դասախոսը չի ղեկավարում քննարկումը՝ միայն որոշակի մասնակցություն է ունենում:

Պրակտիկա

Անհատական ուսումնառության գործընթաց, որի ժամանակ ուսանողները ձեռք են բերում որոշակի աշխատանքի համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և աշխատանքային մեթոդներ, քանի որ ղեկավարը ուսանողներին ներգրավում է պրակտիկ գործունեության մեջ: Ուսանողները սովորաբար մասնակցում են պրակտիկաներին անհատականորեն կամ ներգրավված լինելով փոքր խմբերում: Պրակտիկաների արդյունքում նրանք ձեռք են բերում պրակտիկ հմտություններ և գիտելիքներ հետագայում կիրառելու նպատակով:

Նախագիծ

Նախագիծը անհատական և խմբային ուսումնառության ձև է: Ուսանողները որոշակի գործողություններ են իրականացնում առանց մշտական ղեկավարման: Այս գործողությունների արդյունքում ստացվում է վերջնական արդյունքը, որը գնահատվում է դասախոսի կողմից: Ղեկավարի պարտականություններն են ստեղծել հանձնարարություն, աջակցել և խորհուրդներ տալ, գնահատել արդյունքը և

գործընթացը: Ի տարբերություն անհատական աշխատանքների նախագծերի դեպքում ուսանողները միավորում են տարբեր առարկաներից տարրեր և իհարկե այն պահանջում է խորքային մոտեցում և ինտենսիվ աշխատանք:

Հետազոտական աշխատանք

Անհատական ուսումնառության գործընթաց, որի դեպքում ուսանողները աշխատում են հետազոտական թեզի վրա: Հետազոտական աշխատանքի դեպքում ուսանողները պետք է ցույց տան, որ կարող են մեկնաբանել, զեկուցել և գնահատել իր սեփական հետազոտության արդյունքները կամ այլ հետազոտողնի կողմից ստացված արդյունքները, ինչպես նաև հնարել կամ իրականացնել ղեկավարի կողմից վերահսկվող հետազոտություն: Հետազոտական աշխատանքի ընթացքում դասախոսը ժամանակ առ ժամանակ միջամտում է՝ քննարկելով գործընթացը և արդյունքը:

Սեմինար

Ուսումնառության գործընթաց, որի ժամանակ ուսանողները սովորում կամ կիրառում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, դիտարկում են մասնավոր դեպքեր՝ դասախոսների վերահսկմամբ: Այս դեպքում դասախոսը իրականացնում է հարցազրույցեր, քննարկումներ, վարժություններ, կարճ հանձնարարություններ և այլն: Ուսանողների քանակը պետք է լինի սահմանափակ, որպեսզի ղեկավարը կարողանա դիտարկել ուսանողների առաջընթացը, աջակցել և ուղղորդել ուսանողներին կամ ուսանողների խմբին և անհրաժեշտության դեպքում միջամտել ուսումնառության գործընթացին: Ի տարբերություն լեկցիաների, որի դեպքում հիմնականում դասախոսն է հաղորդակցվում ուսանողի հետ, սեմինարի դեպքում կարող է հաղորդակցությունը տեղի ունենալ ուսանողների միջև կամ դասախոսների և ուսանողների միջև: Այս դեպքում խնդիրները կամ վարժությունները լուծվում են ուսանողների կողմից դասախոսների վերահսկողության արդյունքում:

Ուսումնական այց (էքսկուրսիա)

Կոլեկտիվ ուսումնառության գործընթաց, որի դեպքում ուսանողները այցելում են ձեռնարկություններ, կազմակերպություններ, ինստիտուտներ և այլ վայրեր

ուսումնասիրելու առարկայի հետ կապված որոշակի տարրերը: Էքսկուրսիաները կարող են ղեկավարվել դասախոսի, ոլորտի փորձագետի կամ այլ ուղղորդողի կողմից:

Աշխատանքի տեղավորում

Ուսումնառության գործընթաց, որի դեպքում ուսանողները ընդգրկվում են առօրյա աշխատանքային գործունեության մեջ: Այս մեթոդի օգնությամբ ուսանողները սովորում են կիրառել իրենց ձեռք բերած գիտելիքները և հմտությունները աշխատանքային միջավայրում: Ղեկավարը ընտրում է ուսանողներին, վերահսկաում է իրենց գործունեությունը, աջակցում է հարկ եղած դեպքում, առաջարկություններ և դիտողություններ է անում և իրականացնում է գնահատում: Այս մեթոդը տարբերվում է այլ նմանատիպ մեթոդներից իր առավել երկար տևողությամբ և ուսանողներին տրված ինքնուրույնության աստիճանով: